



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՈՆԻԱՅ ԸՆԴՈՒՄ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1863

ԹԻՒ 716

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՈՆԻԱՅ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մեծին Բրիտանիոյ կառավարութիւնը զօրաւոր փաստեր և անժխտելի իրաւունքներ յառաջ բերելով 'ի մասին ապարդիւն վախճանին առաջարկեալ վեհապետական ժողովոյն, բացառական պատասխան մի գրեց Վաղղիոյ կառավարութեանը: Անգղիոյ աւել թուական արտաքին գործոց պաշտօնեայ լորտ Դոհն Ռասէլ իւր նամակին մէջ համառօտեալ աչքէ անցընելով յիշեալ վեհապետական ժողովոյն մէջ քննարկուեալ և որոշուեալ խնդիրները, ըսաւ թէ անոնց մէջ ամենէն գլխաւորները երկուք են. այսինքն Բոլոնիայի խնդիրը և Իտալիոյ խնդիրը: Առաջին խնդրոյն համար վսեմափայլ լորտ Դոհն Ռասէլ այսպէս կը գրէ իւր նամակին մէջ.

“Միթէ հաւանական է, որ Արքայաժողով մի կառող ըլլայ առանց զինու զորութեան ապահովման և Բոլոնիայի համար՝ աւելի օգտակար պայմաններ քան զայնոսիկ, որոնք գեապանական միջոցներով առաջարկուեցան: Առեւտրական իւր զինուորական գերազոյն կացութեամբը և իւր անողորմելի խստութեամբը մեծապէս յառաջ գացած է ապստամբները զսպելու մասին: Արեւմտեան հաւանական է, որ իւր զորութեան հպարտութեանը մէջ շնորհէ զոր ինչ զայցաւ իւր վեհապետական ասլի օրերը. միթէ կարելի է որ Ռուսիան ուզէ բոլորնայց անկախութիւնը հաստատել վեհապետական ժողովոյ մը պարզ մէկ խնդրով: Եւ եթէ չուզէ, այնու ժամ իւր պանդխտութեան պիտի ըլլայ նուազ տանալու և պղտիկ իյնալու, կամ պատերազմ պիտի հրատարակէ Ռուսիոյ դէմ: Իսկ շատ տերութիւններ ոչ պատրաստութիւն և ոչ կամք ունին այսպիսի պատերազմի մը ծախուցը և պատահական վտանգիցը ենթակայ ըլլալ:”

Երկրորդ խնդրոյն վրայօք Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց անտէրը հետեւեալ առաջարկութիւնները կը դնէ.

“Եթէ Իտալիոյ խնդիրը աչքէ անցնելու ըլլամք, որիչ նոր գծաւարութիւններ կը ներկայանան մեզ: Այսինքն միթէ Արքայաժողով միտք ունի նոր գաղափարներով մի վաւերացնել Իտալիական Թերապոլիոյն այժմեան վիճակը: Սակայն տարակոյս չկայ թէ Վաղղի և Բոլոնի վեհապետներ՝ որոնք ընտանեկան կապակցութիւններ ունին գահակալոյս իշխանաց հետ, պիտի դէմ դնեն մէկ կողմանէ, և պիտի չուզեն այնպիսի տնտես մի տալ Իտալիոյ թաղաւորին, զոր միշտ ցայտօր մեծեցին: Միւս կողմանէ Վիքթոր Էմանուէլ թաղաւորը դէմ պիտի դնէ այնպիսի իրաւաւորութեան (ոչտնտես) մը, (այսինքն թաղաւոր Իտալիոյ կողմէն արտօնութեան ջնջուելուն), որով կարգելուի անոր, դնէ լուեւայն, հոմը և վեհապետական անկախութիւնը:

“Եւ զոչ քան ժողով միտք ունի խնդրել Աւստրիայէն, որուն երեսփոխանը ներկայ պիտի ըլլայ, որպէսզի հրաժարի վեհապետի տիրապետութեան: Սակայն Անգղիոյ կառավարութիւնը շատ աղէկ գիտէ թէ Աւստրիան ամենէն մասնակից պիտի չըլլայ այնպիսի Արքայաժողովոյ մը, յորում քննութիւն պիտի ըլլայ ասանկ առաջարկութեան մը վրայօք: Ուստի այս խնդրոյն մէջ ևս վեհապետական ժողովոյն որոշումը կամ ընդունայն պիտի ըլլայ, կամ Եւրոպան պիտի պարտաւորի պատերազմ հրատարակել Աւստրիոյ դէմ:”

որա Դ. Ռասէլ միւս երկրորդական խնդրոց վրայօք ևս այսպիսի բանաւոր բացատրութիւններ չէ տալ, այսպէս կը վերջացնէ իւր նամակը:

Չափաւոր թաղաւոր կառավարութիւնը չը

կրնալով նշմարել հաւանականութիւն մի 'ի վեհապետական վախճանի վեհապետական ժողովոյ մի, զոր կը յուսայ Վաղղիացոց կայսրը, և իւր ներքին համալմանը հետեւելով, զինի հասուն և կատարեալ քննութեանց, կը պատասխանէ թէ անկարելի է որ ընդունի զհրաւէրը վեհապետ “Արքայաժողովոյն”:

Վաղղիոյ լորտութիւնները իստի կը դատապարտեն Մեծին Բրիտանիոյ այս բացառական պատասխանը, որով վեհապետական ժողովոյն գումարման անկախութիւնը բոլորովն ջնջուեցաւ:

Եւստինի Վորնինի Բոսթ օրագիրը, որ լորտ Բէլմըրսթընին բերանէ, գաղղիացի լորտութեանց պատասխանելով՝ յառաջ կը բերէ Անգղիոյ այժմեան պաշտօնատարաց մեծ փորձառութիւնը, որոնք աւելի յաջողակ են, ըստ յիշեալ լորտոյն, քան նախկին Եւրոպիոյ կացութիւնը. ուստի պէտք չէ, կըսէ, թէ թեաք մեղադրել զանոնք իրենց նախատեսութեանը վերայ, թէ Արքայաժողով մի ամենին յաջող վախճան մի չկրնար ունենալ այժմեան պարագայից մէջ:

Վաղղիոյ պաշտօնական լրագիրը՝ Մոնիթօր անուն, կը հրատարակէ մօտիւ Եւրոպիոյ պաշտօնատարին յայտարարել, որ կայտնութեան դանձալին հաշուց կացութիւնը կը ներկայացնէ: Այս յայտարարումը համեմատ կը տեսնուի թէ Վաղղիոյ տէրութիւնը 962 միլիոն քաղաք ունի այժմ: Հարկաւոր է, կըսէ եկամտից տեսուչ մօտիւ Գլուշտ, որ յիշեալ գումարին մէկ մասը հաստատուն պարտոց վիճակի մէջ գրուի, այսինքն քոնսոլիտէ կոչուած դրամատոմսերու փոխակերպութիւն, 300 միլիոն փրանքի փոխառութիւն մի ընելով:

Մէքսիքոյ պատերազմին համար եղած ծախքը՝ 210 միլիոն փրանքի կը հասնի: Եւրոպիոյ տեսուչը կը յուսար, որ յիշեալ երկրին համար ըլլալու փոխառութիւնը պիտի վճարէր Վաղղիոյ կառավարութեան ըրած այս ծախքը: Եւ թէպէտ յոյս կայ թէ մօտեքս կանանաւոր կառավարութիւն մի պիտի հաստատուի Մէքսիքոյ մէջ, այսու ամենայնիւ պէտք չէ կըսէ, այս պարտոց վճարման վերայ հիմնել Վաղղիոյ դանձալին վիճակին ապահովութիւնը: Մօտիւ Գլուշտ կը յուսայ թէ պիտի չուզանայ հասնելու այն օրը, յորում տէրութեան ծախքը նուազեցնելով և եկամտները աւելնալով, կարելի պիտի ըլլայ հետզհետէ իջեցնել պարտոց գումարը: Եթէ յետ այսորիկ տէրութեան եկամտից և ծախսից հաւասարակշռութիւնը հաստատուն պահուի և եթէ կայսեր վեհապետական ջանքը ապահովէ Եւրոպիոյ խաղաղութիւնը, մեր դանձալին հաշուց բարեկալով վեհապետութիւնը պիտի տայ, կըսէ մօտիւ Գլուշտ, հարկերը նուազեցնել և 'ի գործ դնել ազգային ժողովոյն մեծագոյն մասին բաղձանքը:

Այս յայտարարոյն իմաստէն քաջաւերուելով, Մորնինի Բոսթ լրագիրը կը յուսայ թէ Եւրոպիոյ խաղաղութիւնը պիտի չվերգուի Վաղղիոյ կազմանէ:

Արքայաժողով օգոստոսի միայն բանակի օգնականներէն իջեցրի զօրապետը յատուկ պաշտօնի մը մօտեքս Բէլմըրսթընի յուսարկեցաւ ըստ հրամանի Եւրոպիոյ վեհապետութեան:

Անգղիան՝ իւր կառավարութեան հաստատուն ու աղատասէր դրութեամբը, կը յառաջդիմէ միշտ ամենայն յաջողութեամբ:

Մեծին Բրիտանիոյ առաջին պաշտօնեայ լորտ Բէլմըրսթընը հրապարակական մեծահանգէս հայցելութիւն մը մէջ 'ի կենդանութիւն Վիքթորիա թագուհոյն գինի խմելու ժամանակը, երկարօրէն յառաջ բերաւ զմեծագոր կարգաւորութիւնը պաշտօնաւորական զօրութեանց բրիտանական կողմէն: Այս

բին Վիքթորիան վերջացոյց իւր ատենախօսութիւնը զրոյցելով թէ, խաղաղութեան ամենէն հաստատուն ապահովութիւնը՝ պաշտօնաւորական կատարեալ վեհապետական ժողովոյն, որ յառաջ կուգայ Ուստի, յաւելցոյց լորտ Բէլմըրսթընը, անգղիացի ազգը կրնայ ամենայն վստահութեամբ զրոյցել թէ իրեն դպչել ուզող թշնամին՝ անհնարին է որ անպատիւ մնայ:

Այս քաջաւերական խօսքը մեծ ծախսաւարութեամբ ընդունուեցաւ բազմաթիւ սեղանակիցներէն, որոց մէջ մեծատոհմեան երեւելի անձինք կային:

Լորտ Վալթըր Տալլ, որ ժամանակաւ գեսպան էր 'ի Բէլգիոյ, Վորենհայտ յուսարկեցաւ, շնորհաւորելու համար յանուն Վիքթորիա թագուհոյն զթաղաւորն Տալլմարքայի, իւր գահակալութեան բարեպատեհ ատիւնը:

Կըսուի թէ սըր Մէմս Լաուրէնս Հնդկաստանի ընդհանուր կառավարիչ կարգեցաւ փոխանակ լորտ Էլմըրսթընի, որ զինի երկար հիւանդութեան մը մեռաւ:

Ամերիկայի պատերազմը կը շարունակուի, և թէպէտ Հիւսիսային զօրաբանակը մօտեքս մեծ յաղթութիւններ ըրաւ Հարաւային դաշնակցութեան զօրաց վերայ և անոնցմէ 7000 հոգի դէրի բռնեց, նմանապէս 60 թնդանօթ ու շատ մը զինուորական պաշարներ ձեռք ձգեց, այսու ամենայնիւ այս յաղթութիւնները որոշիչ գործքեր չեն. և Հարաւային զօրաբանակը տակաւին մեծամեծ ու հզօր միջոցներ ունի Հիւսիսային յարձակմանցը դէմ դնելու:

ԱՅԳԱՅԻՆ



ՓՈՒՈՒՄՆ ԶԵՍՏԵՐՑ

ՎԱՅՄԱԳՈՅՈՒ ՏԱՏԵԱՆ ՊՈՂՈՍ—ՊԵՏԻՆ

Ինչպէս մեր նախնիքս թուով համառօտիւ՝ ծախուցինք Օսմանեան տէրութեան վառօդապետ հաստան մեծանուն և մեծազգի Պողոս—Պէտը՝ որ ժամանակէ մը 'ի վեր փարիզի կը գտնուէր ուր գացած էր իւր հիւանդութեանը դարման մը գտնելու համար, Վոյեմբերի 25ին իւր մահկանացու ընթացքը կնքեց չըջապատեալ իւր բազմաթիւ ընտանեաց մէկ մասէն:

Հանդուցեալ Պէտը՝ որ Հայոց ազգապետներէն մէկն էր, իւր բարեքրութեամբը, ազգատասիրութեամբը, առատաձեռնութեամբը, և իւր բարեպաշտ ու վեհապետական գաղափարներով և երեւելի հանգիստացած էր ու պարծանք կը համարուէր ընդհանուր Ազգիկ. բայց աւել, անաղորոյն մահը տարածում յապարակեց թէ մէնջ այսպիսի մեծահամբաւ հաղուազիւտ անձ մի, որուն ցաւալի կորստեան վերայ իրաւամբ կողմայ բոլոր Ազգը, իւր բազմաթիւ համազգի և օտարազգի բարեկամները և իւր ազնուական գերդաստանը:

Հանդուցեալ վեց արու գաւալ և երեք աղջիկ կը թողու. որոց ամենքն ալ լեզուապիտութեամբ և ամեն կերպ եւրոպական բարեկրթութեամբ վարժուած են: Իւր մեծ որդին մեծաշուք Աստուէր Էֆէնտին՝ իւր հօրը ծանր հիւանդ ըլլալուն լուրը հետագայ կան զմիւս առնելուն, անմիջապէս ճամբայ ելաւ փարիզ երթալու, բայց զմեղադրաբար չկրցաւ կենդանի գտնել զնա: Հանդուցեալ մարմինը, որ Բոստօնէ պահուած է փարիզի Մուրատեան գաղղիոյն մէջ, շուտով պիտի բերուի 'ի Վոստանդուպոլիս:

—Հայոց ազգը ուրիշ ցաւարի կորուստ մի ևս ըրաւ այս օրերս : Արդումանեան մեծարդոյ Սիքայէլ աղան Նոյեմբերի 28ին հինգշաբթի դիւնը առ Աստուած փոխեցաւ : Ի Սիքայիւզն Կոստանդնուպոլսոյ ի հասակի 48 ամաց , անմիթար տրտմութեան և խորին սոգոյ մէջ թողնուի իւր ազնուական ընտանիքը :

Բնութեամբ ազնիւ , սրաիւ բարեգութ , ու ամեն կերպ բարոյական և իմացական բարեմասնութեամբ զարգարեալ , լեզուազէտ ու առաքինի անձ մըն էր հանդուցեալը , և պսակ պարծանաց Արդումանեան գերդաստանին :

Այլ աւանդ , անագորոյն Պարկեանք՝ որ քանի մը տարիէ ի վեր յիշեալ ազնուազարմիք բարաստանին՝ ապագային մէջ մեծամեծ անկախութիւններ տուող ընտիր անդամները անխնայ յափշտակելու վերայ է , կտրեցին տարածամ և այս զլնաւոր անդամոյն կեանաց ոսկեթելը , ի մեծ ցաւ սրաի իւր բազմաթիւ ազգականաց և բարեկամաց :

Փարիզի Տէպա օրագրոյն Կեկտեմբերի 6 թուոյն մէջ , ըստ նոր տումարի , հետեւեալը կը կարգամբ :

«Տատեան Պողոս—Պէյը , որ օսմանեան տէրութեան ընդհանուր վառագալեալ և Հայոց ազգային ժողովոյն վաղեմի նախագահն էր , այս օրերս վախճանեցաւ Փարիզի մէջ , ուր քանի մը ամիսէ ի վեր կը բնակէր ի պատճառս իւր առողջութեանը : Այս կորուստը մեծապէս զգալի պիտի ըլլայ իւր բազմաթիւ արժանայարգ ընտանեացը համար , Բարձրագոյն Դրան կառավարութեանը համար՝ որուն հաւատարիմ և մտացի պաշտօնակալներէն մէկն էր , և Հայոց ազգին համար՝ որ կը սիրէր զնա իբրեւ հայր :

«Ազնուական Պէյը՝ ֆիւլեր երկրիբէլաթէօյ կոչուած հիւանդութեան զոհ եղաւ , 12 օր սաստիկ ցաւեր կրելէ ետեւ , սակայն իւր վերջին վայրկեանն ինքը մեծ հանգարտութիւն , զուարթութիւն և առ Աստուած վստահութիւն ունեցաւ : Ամեն վարպետ և համբաւուր բոլիշները , ինչպէս են պարոնայք Վէլսօ , Ռէյէ , Գրուս և Պոլլը , վեմաշուք հիւանդին քով գումարուած էին միշտ իւր սովորական բոլիշին հետ , որ մօտիւ Կիւպլէն էր : Բայց հնար չեղաւ այս սոսկալի ախտին արագ լինաց յառաջագիւծութեանը ճար մը դառնալ : Պողոս—Պէյը վեց արու զաւակ կը թողու , որոց ամենն ալ արժանի են իրեն յաջորդելու : Ամեն ծաղկահասակը , որ Սիքայիւզէ Եփէնիէն է , Փարիզի մէջ իւր ուսմանքը վերջացնելու վերայ է այժմ :

«Պողոս—Պէյը ծնած էր յամիս 1796 : Թէպէտե ևս հայրենիքէն հեռու վախճանեցաւ , սակայն ունեցաւ զմիթարութիւնը իւր մահուան անկողնոյն շրջ կողմը դումարուած տեսնելու իւր գերգաստանին շատ անգամները և մասնաւորապէս իւր երեք դստերը ու թոռները , (որոնք այնչափ յարգոյ և երեւելի հանգիստացան Փարիզի մէջ ,) հանդերձ բազմաթիւ բարեկամներով : և այս ամենքը կը փութային իրենց վերջին յարգանաց , անձնանուէր զգայմանց և իրենց զորովայն սիրոյ հաւատալիք լիապէս մատուցանելու նմա : Հանդուցելոյն մարմինը պիտի փոխադրուի ի Կոստանդնուպոլսոյ , ուր պիտի թաղուի իւր աստիճանին և իւր ընկերական բարձր կացութեանը վերաբերեալ հանգիսիւ և պատուով :

Կոստանդնուպոլսոյ Ազգային քաղաքական Ժողովոյն հոգատարութիւնը հետեւեալ Տեսուչ խորհուրդները և հոգաբարձութիւնները կազմուեցան :

Ուսումնական խորհուրդը Եփր անդամներէ բաղկացեալ է , որոց անուանքն են .

- Ազաթօնեան Սիքայիւզ աղա
- Մանուէլեան Յակոբիկ աղա
- Օտեան Գրիգոր Եփէնի
- Խորասանճեան Յօհաննէս աղա
- Լուսնոփեան Տիգրան աղա
- Սիքայիւզեան Սիմոն աղա
- Փափազեան Ստեփան աղա :

Տնտեսական խորհուրդն Ես Եփր անդամներէ կազմուած է , որոց անուանքն ցուցակը հետեւեալն է .

- Արաբեան Մանուկ աղա
- Կիւմլիճի Գասպար աղա
- Չարազեան Յակոբ աղա
- Մանուէլեան Մ. Մանուկ աղա

Խորասան Կարապետ աղա
Թորոսեան Գրիգոր աղա
Յովակիմեան Յօհաննէս աղա :

Դատ առանա ան խորհուրդը չորս կէդեցաւ և Ես չորս ազգայնական բաղկացեալ է : Անուանիլ այս ուր անդամնց անուանքն .

- Տէր Մարտիրոս քահանայ Իսկիւտար Ս. Խաչի
- Տէր Գրիգոր քահանայ Սամաթիոյ
- Տէր Սիւրտիչ քահանայ Խասպիւզի
- Տէր Գրիգոր քահանայ Աճէմեան՝ Բէրայի
- Թի. յիւզեան Գրիգոր աղա
- Տիւփիթեան Գէորգ աղա
- Արապեան Սարգիս աղա
- Մըմըրեան Գէորգ աղա :

Վանքից խորհուրդը Եփր անդամներն .
որ հետեւեալներն են .

- Եղորտեան Եղորտ Եփէնի
- Փէշարմաճեան Սահակ աղա
- Կափամաճեան Յարութիւն աղա
- Տէմիրճիպաշեան Լեւոնդ աղա
- Քրթիկեան Բարուսիկ Պէյ
- Օտեան Կշան աղա
- Եսմըրեան Մարտիրոս աղա :
- Երեւանից հոգաբարձութեան խորհուրդն Ես Եփր անդամներն .

- Դիւնիկեան Սիքայիւզ աղա
- Եղորտեան Լեւոն աղա
- Սէմիրճեան Գրիգոր աղա
- Կէվրուգեան Լեւոնիկ աղա
- Պօշտաբեան Սարգիս աղա
- Թաղուրեան Յարութիւն աղա
- Հարէնց Ըրբասաճ աղա :

Կտակաց հոգաբարձութեան խորհուրդը չորս հոգիւ բաղկացեալ է . որոնք հետեւեալներն են .

- Սիւննեան Գրիգոր աղա
- Կորասունիկեան Սիմոն աղա
- Տէրպիւնց Յօհաննէս պատուելի
- Սոսիկեան Յակոբ աղա :

Ազգային հիւանդանոցին հոգաբարձութիւնը ինը հոգի բաղկացեալ խորհուրդ մի լաւնմուեցաւ : Անուանիլ անոնց անուանքն .

- Քրթիկեան Յ. Տըթթը
- Զոնդեան Աստուածատուր աղա
- Կէորդեան Լեւիկ աղա
- Սոսիկեան Գ. Տըթթը
- Փանասեան Գէորգ աղա
- Լաթիփեան Կասպար աղա
- Արապեան Յակոբ աղա
- Չարապեան Լեւոն Մ. Միհրան աղա
- Տէմիրճի Աստուածատուր աղա :

ՎԵՍՊՈՒՐԵԿԵՆ ԹԵՏՈՐ

Ինչպէս մեր նախնիքս թուով ծանուցինք , Կոստանդնուպոլսէն եկած Հայ գերասանական ընկերութիւնը կը շարունակէ իւր ներկայացումները , և այս յաջորդութեան ամենէն յայտնի ազգայոցը այն է որ , թատրոնը միշտ լեցուն է հանգիստեան երգով , որոց մէջ օտարազգիք ևս անպակաս են :

Յիշեալ գերասանական ընկերութեան անձինքն հետեւեալներն են ,
Պարոնայք

- Ս. Եփէնեան առաջին թերթի քարտէս , գերասանական
- Յ. Աճէմեան , թերթի Հայրապետական և զանազան
- Ս. Պէնիլեան , Հակոբաւորդ
- Ս. Մանուէլեան , Սիրահար
- Յ. Չարաչի , Կատակերգակ

ԵՐԵՐՈՐԴ ԹԵՐ

Պարոնայք

- Թ. Մանուէլեան , Սիրահար և զանազան
- Յ. Մէրասեւեան , Մտերիմ
- Թ. Թրեանց , Կատակերգու թերթի սիրահար

ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻՔ

Օրերգ

- Արուսեակ Փափազեան , առաջին թերթ , քարտէս և գիւցազնուէր
- Պայծառ Փափազեան , առաջին թերթ՝ Սիրահար
- Ազաթի Փափազեան , երկրորդ թերթ
- Կոստիւս Մալեան , երրորդ թերթ :

Տարւոյս գերասանական եղանակին մէջ 60 ներկայացում պիտի տրուի , արտաքոյ կարգի ներկայացումներէ ի վատ , որոնք բաժանորդագրութենէ դուրս են :

Վասպուրական թատրոնը՝ ընդամենը , 42 օրեակ ունի . որոց կէսէն աւելին արգէն բոնուած են բոլոր եղանակին համար : Մէկ գիշերուան համար՝ առաջին կարգի օրեակին գինը 35 զուրուշէ , երկրորդ կարգինը՝ 25 , Կատարանին գինը 8 զուրուշէ , մուտք 6 զուրուշէ :

ՀՆԻԿԵՍԸՆ

Օրինակ նամակին , զոր Կաթաթայու արժանապատիւ տէր Յօհաննէս Խաչիեան աւագ քահանայն յուղարկեալէ առ Աստուածապատիւ կաթողիկոսն յովեթարգումն Ապրիլի 1863 . նամակ՝ զոր Կորին վեհափայլ սրբազնութիւնն յիշատակէ ի կոնգակի իւրում ընդ ամսաթուով 25 Մայիսի 1863 , ուղեկալ առ յիշեալ աւագ քահանայն :

Կորին Աստուածարեալ Քահանայապետի Տեսնե Տեսնե Մատթէոս Ա. սրբաշնորհ կաթողիկոսի , և աւանդապատիւ Կաթաթայու ամենայն տաճար Հայոց՝ օծեալ աջոյն համարը պատկանանայ :

Վեհափառ տէր ,

Թիւ զրոյսը պաշտօնաւորս առ ձերք սուրբ Օծելութիւն՝ ընդ ամեն յիշմարտիչ գառաւ , որոց վերջինն զայդ օրինակը ի 22 անցեալ ամսոյ , (ունիւլ ի ծոցի զօրինակս երկուց զորութեանց հանգուցեալ Թաղուրտեան կաթողիկոսի և մին ի Բարձրութեան ձերք առ նա , զոր յետ մեռանկոյ նորա՝ կաթողիկոսն ի ըյս հանին , և յօրինակի գրութեան Վեհափառի առ Թաղուրտեան կաթողիկոսի պա՛մ մեծեղուն ձեռնորոշութեան ք , փախածիւ յաւելեալ էր վառ քահանային , իբր՝ այժմ՝ արդեւեալ) . այլ ցաւիմ սոգի չունեց պատուաւորս և ո՛չ մին . որոց և ի չլինելու մատենոց , մատենեցան և Հայ ժողովուրդ մնայ քաղաքիս յանհարկին ճաղատման խռովութեան . և տարաբաղապէս տեսնեմ զի ցնդումս աստի ճաղաղել հանդերձեալ զՀեղիատան ազգոյն :

Սարգիս ցաւի ինձ ծանոթանալ և ծանրացումն զհոգս ձեր ի ծանրագործութիւն զոգս տառապեալ վիճակի տղայացն . սակայն վայրկեանական յաւելումն մինչ րաւէ ըստ կարեւորին ամբողջ գործունէութիւն վիճակի աղջոյնոց կողմանց , չվաւելանայ և զպաշտօնաւորս ընդունայն . քանզի արտաքոյ ձերք սպեկանեաց , չունի սոգի հոգի որ սոգեմիցն դարման . և եթէ այս չիցէ , մեռեալ ո՛րի համարիլ և ազգութիւնն :

Յետ յուշ յիշման ամեն իմ յատենի Չերուս ողորմածութեան անթերի գրուածովը վառնայն անցանցիկ և զաւարկայ երկարաւակաթեանց աստի ի շնորհ հանգուցեալ Թաղուրտեան կաթողիկոսի , որ անօրինակ գրուածովք անգոտին յետ մեռելութեան չէ թողեալ անգի չլինան հոգին յաւելանց ի Հայ հասարակութեան տեղեւոյ , որպէս ի սկիզբ պարտականալ վիճակիս օրինակաւ : անկէ տեսնեմ . (այս էր զիւր ցտմանական հրամանի կաթողիկոսին առ քահանայն , զի եթէ դարձցին ի Չարաչի քահանայէ՝ և պատուով ընկալցին . իսկ եթէ ոչ , չլարէ ի Կաթողիկոս կամ յայլուր վարել զպաշտօնս քահանայութեան) , որ յերկրորդումս այս ամսոյ յաւելուր ասպախարութեան ի ըյս ընծայեցաւ , զիտաւորութեամբ թուաւորելոյ զոգս անհոգի զվատ , մեռացանելոյ զիս ի սրտիս քահանայութեան և զնկոյ զվրս ի վերայ վերայ բոլի պատուեալ և ստալին աստիճանի սեպական ժողովրդոց : Ահա զորք աստի Աստուծոյ և քաղաքայնի զանուածոյ հոգեկանին զորք անտարապէս անխրատի : Այս ան զորութիւնէ , որում ընդգէմ կացեալ հասարակութեան հերքեցին և թոյլ չտուան ընթեմեալ յիշեցին , տալով զիրաւուն տեղական , նախ՝ չուէնէր նուատուութիւն իմ յանցանիս ինչ ընդգէմ կեղեկոյց և Արաքելեանի կանոնաց արժանաւոր վրիճուան անթիւ վճարելոյն անձնաւոր կրկն . երկրորդ՝ որ արժանին էր , դատ կաթողիկոսի և աստիճանի արկեալ յատեան բարձրագոյն իրաւարարանի Չարաչ մեծութեան և սրբազան Սիւննոսի ի յիշմանի , հարկ էր սպասել և դատական ըյս . և այսպէս ոչնչացուցեալ զորութիւնն անհոգեալութեամբ հեղինակին զորոյն , անդին այսօր յետ ամի միոյ զինի մահուան Կաթողիկոսին ի ըյս ընծայի , և այն յաւելուր Զատիկանի . որով անբովանդակելի արտաթութեամբ յիշու պիտի պատուեանայ և չիւրանաղապ , անգի դատան դարձուցման ոմանց երեսոց յիշեցին Չարաչ , ոմանց բողոքականաց յաղթարան , երազմայ ո՛չ աստ և ո՛չ անդ՝ անթիւ զորով պատուելի վիճակաւ քահանայցի բաղաւ :

Պարոն Անդրեաս Սամ, ըստորում առևտրական գործոց ևս կը պարտադիր յիշեալ ծովագետական քաղաքին մէջ, իւր հաւատարմութիւնները կը մատուցանէ հայազգի վաճառականաց խմբին, Առևտրական պալատի և ուրիշ քաղաքացի, ապահովներով զանոնք թէ գոհ պիտի ըլլան, եթէ բարեհաճին պատուել զինքը՝ իրենց յանձնարարութեամբքը:

Մանչեսթըրի մէջ, Հասնազարեանց զերապա-տիւ տէր Կարապետ վարդապետին խմբագրութեամբ հրատարակուելու Ներկայողութեան անուն լրագրին երկ-րորդ թիւը՝ Հոկտեմբերի 1ին ըստ նոր տուժարի պիտի հրատարակուէր. այսու ամենայնիւ մինչև յայսօր տակաւին երևան չե՛լաւ այն: Սիրելի է մեզ յուսալ թէ այս յարադման պատճառը ծանր պա-րագայէ մը յառաջ եկած չէ:

Ինչպէս որ Երջալուսոյ Օգոստոսի 24 թուոյն մէջ ծանուցած եմք, յիշեալ լրագրին առաջին թիւը Յուլիսի 18-30ին 'ի լոյս' ընծայուեցաւ. որուն մէջ Հասնազարեանց զխմբական վարդապետը թէպէտ 500 բաժանորդ կը խնդրէր, բայց միանգամայն ազգասիրարար կը խոստանար Հոկտեմբերի 1ին ըստ նոր տուժարի հրատարակել Ներկայողութեան երկրորդ թիւը և շարունակել զայն երեք տարի, թէ՛ յաջող և թէ՛ անյաջող պարագայ հանդիպելու ըլլայ:

Անցեալ կիրակի օրը, խմբին թաղական խորհրդոյ ղեկավարաց ընտրութիւնը կատարուեցաւ, ըստ տնօրէնութեանց ազգային Սահմանադրութեան: Բայց ցաւ է մեզ ծանուցանել, թէ 600 ընտրողնե-րէն միայն 252 հոգի քուէ տուին կամ զրկեցին. միւսները անհնախ հոգ չտարին իրենց ընտրողական իրաւունքը 'ի գործ դնել: Այս անտարբերութիւնը, որ մեղադրանաց արժանի է, կը պարտաւորեմք ըսելու թէ, պատիւ չընէր խմբին Սահմանադրատէր հոյ ժողովրդեան:

Ահա տալի ընտրեալ ինը անգամայն անուանքը.

Պարոնայք	Քուէ
Գեորգ Վ. Էման	117
Սիմոն Վ. Էման	115
Մահտեսի Եղաղայ Սարգսյան	109
Մահտեսի Յակոբ Գարազէան	85
Ստեփան Շքմարտախան	73
Մահտեսի Յակոբ Եսայան	69
Ստեփան Պալանանյան	62
Յօհաննէս Կուպրեան	58
Սարգիս Տիրացուան	55

Կոստանդնուպոլսոյ յարգոյ պարոն Արմէն, որ տեղի է հասնազարեանց, այսինքն վարդապետ ան-հաւ, մօտեւ խմբին եկած է և իւր արհեստը 'ի գործ կը դնէ խոյունակ յարգոյ պարոն Մարտիրոսին խանութը, որ 'ի Մատամ խանի:

Իւր ձեռքին ելած քանի մը գործքերը տեսնող, որ շատ վարպետութեամբ շինուած են, ուստի տարակցա չունիմք թէ անոր հազարադրու արեստուն վառահանութիւնը և է գործ մը յանձնողները մեծապէս գոհ պիտի ըլլան:

Մոսկուայի Համբաւեւեր Ռուսիոյ պատուական լրագրոյն մէջ հետեւեալ ազգային տարեր կը կարգաւորէ.

«Վերադարձ» թէ 'ի տեղի հանգուցեալ թաղական արքեպիսկոպոսի, Պարսկաստանի և Հնդկաստանի թեմական առաջնորդ նշանակուած է սրբազան Սարգիս արքեպիս-կոպոսն Զաքարեանց, որ այժմ գտնուելով է Ստանկին:

«Թաղապետ Կայսրն» ըստ վերջին թիւն Նորին կայ-սերական բարձրութեան Կոնկլասեան Պոլսոյ լրագրի վտանգերու վերաբերեալ և օգտաւոր ծառայութեանց ան-դամոյ Սինհոգոսին սուրբ Լեւոնի Մարտիրոսեան կոպոսի և Անդրեաս Կոնկլասեան, ամենաընթացաբար բարեհաճեցաւ օգոստոսի 30ին ներկայ տիւ վարձարեւել զնոսա սրբոյն Վրաստանի երրորդ աստիճանի շքանշա-նաւ»:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Օգոստոսի Սուրբաշին հրատարակաւ, կայ-սերական գիւնարին նախորդ ատենադպիր Մոստա-ֆա Էֆենտին՝ արդարութեան պաշտօնեայ կարգե-ցաւ, փոխանակ Օլա-Պէյին, որուն Ամասիայի կա-ռավարչութիւնը յանձնուեցաւ:

Ամասիայի կառավարիչ Սալիհ փաշան՝ Գարապոնի կառավարիչ կարգեցաւ:

Նիսիսի Պէյը՝ կայսերական գիւնարին ատենա-դպիր անուանեցաւ:

Օգոստոսի Կայսրը՝ որ միշտ պատրաստ է իւր մարդասիրական բարձր խնամքը միթաբել զկարօ-տեալները, հաճեցաւ 250 հազար զուրուշ շնորհե-լու թաղապետան զաղծող բազմաթիւ Չէքէզնե-րուն: Օգոստոսի Վալիէ Սուրբաշին ևս 50 հազար զուրուշ տուաւ և Կայսերական բարձրագոյն Նաւաթ-Իզլէտիսին իշխանը 25 հազար զուրուշ:

Բարձրագոյն 'Իրան հրամանաւը՝ Յանձնաժո-ղով մի կազմուեցաւ Օլէյթունի գործքերը քննելու համար: Այս Յանձնաժողովը, որ անցեալ շաբթու-միկնեցաւ Օլէյթունի երթալու, բաղկացեալ է երեք հոգիէ. որոնք են վսեմափայլ Հաճին-Պէյը՝ Բ-Դրան կողմանէ, Օմիւռնացի Ազարէկեան Սարգիս ազան՝ Հայոց ազգին կողմանէ և արքիէօր Տալուս Էֆենտին՝ Հոռմակիան Հայ ժողովրդեան կողմանէ:

Մեղու հանգիստին խմբակիւր՝ Բաղապալան ժո-ղովոյն ազգասիրական տնօրէնութեանցը հնազանդել չուզելով, նոյն ազգային մեծարգոյ ժողովը յատուկ յայտարարով մը խնդրեց Բարձրագոյն Դռնէն, որ հրաման տայ առժամանակեայ կերպիւր գաղութները իշխելու հանգիստին հրատարակութիւնը:

Կրօնական և Բաղապալան ժողովոյ թրջմամբ՝ Շահինու առաջնորդ արժանապատիւ Մեհրոպ վար-դապետը՝ Մարաշու հոգեւոր հովիւ անուանեցաւ, փոխանակ գերապատիւ Նիկողայոս Կալիպոսին, որ ժամանակէ մը 'ի վեր հալեալ կը գտնուէ:

ՁԱՆԱԶԱՆ ԵՄԻՐԻ

ՁԱՆԱԶԱՆ, 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ:

Օգոստոսի Վալիսի սուլթանը՝ 'ի վարձատրութիւն հաւատարմութեան և գործունեայ ծառայութեանց քաղաքիս ընդհանուր կառավարիչ Պաշայի Սահմա փաշային, բա-րեհաճեցաւ քիտախոյոյ ակամակուտ մեծարքիս տուի մի-շնորհեալ Նորին փաշան իշխանը:

Վսեմափայլ Սահմա փաշան պատիւ ունեցաւ նոս. ըն-դունելու խալիպայ օգոստոսի 18-ին թաղապետի Սա-րիկիսին և Վալարու ասպետական կարգին առաջին տա-տիճանի շքանշանը:

Բաղապալան մարտադրական տեսուչ մեծապ. Նիկիթ Պէյը՝ կայսերական բարձր հրամանաւ, պատուեցաւ Սանիկ Սահմայի խալիպային, 'ի վարձատրութիւն իւր հաւատարմութեան և ծառայութեան:

Ամենայն ճիշդութեամբ հրաշք մի պատահելով Յոսաւա կոչուած թաւը, 200ի չափ տուն, խանութ և տախտակալն խանիկ հրոյ ճարակ եղան: Ամեն կողմէն օգնութիւնները պակաս չեղան. այսու ամենայնիւ հրաշ-քն է՝ թաւ տեղի: Հրկիւնեայ շատը Յոյն ազգայն ըն-տանիք են. որոց մէկ մասը առժամանակեայ կերպիւր ըն-դունուեցան Պաղարկաւոյ ազգային հիւանդանոցը և միւս մասը Յունաց ազգայն հիւանդանոցը:

Վսեմափայլ Սահմա փաշային մարդատրական խնդրա-նոր յանձնաժողով մի կազմուեցաւ, որ գրամական օգնու-թիւն պիտի ժողովէ, 'ի միջոցաւ արտաթիւն 'ի նպատակա-րատար հրկիւնեայ:

Այս հրաշքին ժամանակը ցատալի մարդասպանութիւն մի տեղի ունեցաւ: Անդամ Յոյն մի գանդակաւոր ևս սպանեց զինուորական մի, որ հրաշքին մէկ կողմէ կայ-նած սպանութիւն կ'ընէր, որ զոլովութիւն կամ ուրիշ անկարգութիւն մի չըլլայ: Յոյնացի մը, որուն վերայ կապած կ'ըլլայ թէ այս մարդասպանութիւնը բրած է, անմիջապէս բանտարկեցաւ, և ըստ օրինաց անոր դա-տաւանը կը տեսնուի:

Այս ժողովը գալմաղամ շաղիմ-Պէյը, որ իւր հիւանդ-ութեանը պատճառաւ խմբին եկած էր, երեք շաբթի օրը իւր մահկանացու ընթացքը կ'ընէ:

Այս ժողովը գալմաղամ պաշտօնը՝ ըստ հրամանի մեր վը-սեմափայլ ընդհանուր Կոստանդնուպոլսի, Հիւլի Էֆենտին յանձնուեցաւ, որ քաղաքիս նշանական գործոց ատենին նախագահէ:

Կոստանդնուպոլսոյ Պարսից ղեկավարատան գլխա-ւոր պաշտօնականներէն Հայկազուն մեծարգոյ Մեղուտ խանը՝ անցեալ շաբթու խմբին անցնելով Ազերբայջ-րիս գնաց: Կը ըսենք թէ Մեղուտ խանը՝ իւր կառավար-ութեան հրամանաւ Պարսից հիւպատոսի պաշտօնը պի-տի վարէ յԱզերբայջրիս, տարեկան 1000 լիրա վարձքով:

ԾԱՆՈՒՅՈՒՄ

ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊՍՀՈՎՈՒԹԵԱՆ

Այս մեծ ընկերութիւնը ամեն տեսակ անշարժ ստա-ցուածքը կապահովեցնէ և հրկիւնութիւն մը պատահե-լուն՝ անոնց ապահովեալ արժեքը կը վճարէ. նմանա-պէս որ եւ անձի մը կեանքը կ'ապահովեցնէ եւ յիշեալ անձը ինչ արժեք որ ապահովուցած է իւր կեանքը փո-խարէն, նոյն արժեքը՝ իւր մահուանէ ետեւ կը վճարէ այն մարդուն, զոր հանգուցեալը յառաջմանէ նշանա-կած է գրուեալը:

Յիշեալ ընկերութեան կարեւորութիւնը եւ մեծու-թիւնը Հայոց հասարակութեան խմբակցութեան համար, արժան կը համարուի ծանուցանել քե անոր ստորա-գրեալ դրամագրութիւնէ:

ԵՐԿՈՒ ՄԻՒԻՈՆ ԼԻՐԱ ՍԹԵՐԼԻՆ

Իսկ ընկերութեան գրամարկեղաց մեջ առայժմ պատ-բաստ գտնուած դրամաց գումարն է

Լիրա սթերլին 1,000,000

Այս տեղեկութիւնները ամենահարկաւոր են իւր ըս-տացուածքը կամ իւր կեանքը ապահովեցնել ուզող ան-ձի մը համար. վասն զի մեծ դրամագրութեան հաստա-տուն երաշխաստութիւն մըն է, քե ընկերութիւնը կա-րող է իւր խոստումները 'ի գործ դնել՝ ինչպէս նաեւ ապահովելու օրինաւոր պահանջմանը կատարել:

Թագաւորական ապահովութեան ընկերութեան տա-րուէ տարի ըրած յառաջողութիւնները խմբակցութեան հա-մար, հասարակութիւնը պիտի որ գիտնայ քե միայն հրկիւնութեան դիմ ըրած ապահովութիւններէն 1830ին 44,027 Լ. Ս. վարձք առաւ. 1852ին 76,927 Լ. Ս. ա-ռաւ. 1854ին 128,459, 1856ին 151,755, 1858ին 196,148 Լ. 1860ին 262,978 Լ. Իսկ 1862ին առած վարձք գումարը 500,000 լիրայէն աւելի է:

Այս կերպիս յիշեալ ընկերութիւնը՝ Անգլիոյ ամենէն մեծ ընկերութեանց կարգը զատուած է, եւ կը կարծուի քե Լոնտոնի մեջ չ'այս ուրիշ ընկերութիւն մի, որուն ե-կամուտը հաւասար ըլլայ այս ընկերութեան եկամուտի-ցը, զոր կ'ընդունի հրկիւնութեան դիմ ըրած իւր ապա-հովութիւններէն:

Ստորագրեալը գործակալ եւ երեսփոխան կար-գուեցան Իզմիրի մեջ այս Թագաւորական Ապահովու-թեան ընկերութեանը, փոխանորդական օրինաւոր գրութեամբ մի. յարապիտալ գաւառատանական Գոսա-րի մը առջեւ 'ի Լիվրպուլ 'ի 14/26 հոկտեմբերի 1863. Եւ այս գրութիւնը յիշեալ ընկերութեան երեք տեսուչ-ներէն (տիրէքթօր) ստորագրուած ըլլալէ 'ի գաւ, ա-մեն գաւառատանական օրինաւոր ձեւերով վաւերա-ցեալ է. ուստի ստորագրեալը կը ծանուցանէ հասա-րակութեանը քե, այսօրուանէ սկսեալ, կ'ընդունին ա-պահովութեան առաջարկութիւններ քե՝ անշարժ ըս-տացուածք վերայ՝ ինչպէս են տներ, մերթադնեցնէր եւայլն, եւ քե՝ անոնց մեջ պարսկական բանքուան վերայ. նմանապէս կապահովեցնէ Մարտադրութեան կամ ուրիշ տեղ գրուած ամեն տեսակ ապահովութիւնը:

Իզմիր, 19 Նոյեմբեր (1 Դեկտեմբեր) 1863:

(Ստորագրեալ)՝ ՌԷՃԻՍ Է. ԳՈՐՍԻ
Յարակալ քաղը, Վաւերիին Յրեկիսանէն

ԲՈՒՂՆԵՄԷՆ ԿԱՐ ՕՐԵՃՈՅՑ

1864 ՆՈՒՅԱՆՁ ԱՄԻՆ

Հանդերձ գտնուելով իմարձ Թուրքաց լեզու և հայերէն տառերով, Բաղապալան կոչուած Յոյն գրադիտին:

Թարգմանութեամբ և խմբագրութեամբ

Դպրեցրցի յարգոյ պարոն Գրիգորի Մկրտչեան:

Իզմիր, 'ի գործարանի Տէրեկան:

Պարտաւ 96 էրեսէ բաղկացեալ գրքոյ մըն է, որ հա-լիքին ծառայակ օրացուցի պաշտօնը կատարելէ 'ի գաւ, գանգաւ բարոյական եւ հարկաւոր տեղեկու-թիւններ կու տայ Թուրքաց լեզուաւ:

Կը վաճառի Իզմիր՝ Յ. Շահվերդիեան եղբարց գրա-վաճառութեան խանութը, որ սուրբ Ստեփաննոս եկե-ղեցոյն ղիմացն է. եւ Կոստանդնուպոլսի՝ գրավաճառ պարոն Յարութիւնին խանութը:

ՕՐԱՅՈՅՑ ԴԻՐԻՄԱՅ

Պարագրեալ գողցիւրէն լեռնաւ վասն 1864 նամակը ամին: Կը վաճառի Երեսփոխալ լրագրոյն ապարանը:

Խմբակցութեանը լրագրոյն,
Դրամ Գ. Պաշտօնաւորէն: